«ՔԱՋԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/5»

ք. Քաջարան « » 2018թ.

«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ը ի դեմս տնօրենի պաշտոնակատար Հրաչյա Թադևոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի ֆարմ»ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Ասատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառ

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1 795 874 (մեկ միլիոն յոթ հարյուր իննսունհինգ հազար ութ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է 2018թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

3. 3 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետը՝ մինչև ֆինանսական միջոցները նախատեսվելը, սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն կետի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ***Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն այս պայմանագրի շրջանակներում գնումը կիրականցվի անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում և կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:***

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջական խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ	«Նատալի ֆարմ»ՍՊԸ
Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1	Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ	Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ
Հ/Հ 1570025402170100	Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 09417527	ՀՎՀՀ 01222567
Տնօրենի պաշտոնակատար Հ.Թադևոսյան	տնօրեն՝ Ա.Ասատրյան
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« » 2018 թ. կնքված
«ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	Արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
2	33141320	Ասեղ G21 (0,8x40) №100	Եվրոմեդ, Չինաստան	Ասեղ 21G միանվագ օգտագործման համար (0,8x40), Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:	հատ	4.9	1470	300	ՀՀ,Սյունիքի մարզ, ք.Քաջարան, Բակունցի 1, «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Համապատասխան պատվերի	Նախատեսվում է գնել 2018թ-ի ընթացքում, յուրաքանչյուր անգամ պատվիրատուից պատվեր ստանալուց 5 աշխատաքնային օրվա ընթացքում՝ գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:
3	33141328	Ասեղ ողնուղեղային՝ «Սպինոկան» G-22(4507754)	Բ. Բրաուն, Գերմանիա	ասեղ ողնուղեղային անեստեզիայի համար Սպինոկան, կտրվածքը Կվինկեի, (4507754) G-22՝ սև, 0,7x75մմ	հատ	413.66	8273.2	20			
7	33141000	Անձեռոցիկ թանզիֆ ստերիլ 16*14 № 20	Նատալի Ֆարմ, Հայաստան	Անձեռոցիկ թանզիֆ երկշերտ, ստերիլ 16*14 տուփում 20 հատ	հատ	7.42	29680	4000			
8	33141130	Ման բժշկ. Անալիզի համար 120մլ	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենք, Չինաստան	Մեզի անալիզի տարա պլաստիկից	հատ	54	108000	2000			
10	33141117	Բամբակ 50.0	Բոնեքս, Թուրքիա	Բժշկական բամբակ 50.0-սպիտակ, փափուկ զանգված, արագ թրջվում է և լավ կլանում հեղուկը	հատ	81	40500	500			

Բոնեքս

15	33141110	Բինտ 7x14/ստերիլ/	Նատալի Ֆարմ, Հայաստան	Վիրակապ՝Բինտ 7x14/ստերիլ/	հատ	105.84	84672	800			
16	33141110	Բինտ գիպսե 3*20	Եվրոմեդ, Չինաստան	Բինտ գիպսե 3*20	հատ	280	19600	70			
18	33141129	Դիմակ մեկանգամյա օգտագործման՝դիմակ բժշկական կապոցներով 17,5 x9.5սմ 3 շերտանի № 50	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենք, Չինաստան	Դիմակ մեկանգամյա օգտագործման 17,5 x9.5սմ եռաշերտ	հատ	13	13000	1000			
19	31651200	ԷՍԳ- ժապավեն 63*30*18 (p-4027)	Դիագրամային թղթի ֆաբրիկա, Ռուսաստան	Գլանափաթեթ 63*30*18 (p-4027) 1,89 մ ² հատ	տուփ	3890	19450	5			
24	33141000	Էնդոտրախեալ խողովակ մանժետով N6.0	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենք, Չինաստան	Էնդոտրախեալ խողովակ մանժետով N6.0, Պատրաստված է փափուկ, ատրավմատիկ նյութից	հատ	230	6900	30			
25	33141000	Էնդոտրախեալ խողովակ մանժետով N6.5	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենք, Չինաստան	Էնդոտրախեալ խողովակ մանժետով N6.5 չափի, թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից	հատ	230	4600	20			
26	33141000	Էնդոտրախեալ խողովակ մանժետով N7.5	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենք, Չինաստան	Էնդոտրախեալ խողովակ մանժետով N 7.5 չափի, թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից	հատ	230	23000	100			
27	33141000	Էնդոտրախեալ խողովակ մանժետով N7	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենք, Չինաստան	Էնդոտրախեալ խողովակ մանժետով N 7 չափի, թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից	հատ	230	11500	50			

28	33141000	Էնդոտրախեալ խողովակ մանժետով N8	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենք, Չինաստան	Էնդոտրախեալ խողովակ մանժետով N 8 չափի, թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից	հատ	230	11500	50			
33	33141310	Ժանե ներարկի չ լայն երկար ծայրով 60.0	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենք, Չինաստան	Ժանե ներարկիչ լայն երկար ծայրով 60.0, Միանվագ օգտագործման ստերիլ	հատ	109.2	3276	30			
38	33141136	Կատետր միզային /երկճյուղ G 16	Եվրոմեդ, Չանգժոու Յուանդոնգ մեդիքալս Էքվիփմենթ, Չինաստան	Միզային կաթետր Ֆոլի երկճյուղ 16Fr սիլիկոնապատ	հատ	164.99	24748.5	150			
39	33141136	Կատետր միզային /երկճյուղ G 18	Եվրոմեդ, Չանգժոու Յուանդոնգ մեդիքալս Էքվիփմենթ, Չինաստան	Միզային կաթետր Ֆոլի երկճյուղ 18Fr սիլիկոնապատ	հատ	164.99	24748.5	150			
40	33141136	Կատետր միզային /երկճյուղ G 14	Եվրոմեդ, Չանգժոու Յուանդոնգ մեդիքալս Էքվիփմենթ, Չինաստան	Միզային կաթետր Ֆոլի երկճյուղ 14Fr սիլիկոնապատ	հատ	164.99	3299.8	20			
41	33141136	Կատետր երակային G-18	Էնջիլպլաստ Փրիվատ լիմիթեդ , Հնդկաստան	Պերիֆերիկ կատետեր G-18, ատրավմատիկ ծայրով, հիգենիկ ներարկման պորտով տեղադրված է թևիկների վրա	հատ	44.89	1346.7	30			
42	33141136	Կատետր երակային G-20	Էնջիլպլաստ Փրիվատ լիմիթեդ , Հնդկաստան	Պերիֆերիկ կատետեր G-20, ատրավմատիկ ծայրով, հիգենիկ ներարկման պորտով տեղադրված է թևիկների վրա	հատ	44.89	22445	500			
43	33141136	Կատետր երակային G-22	Էնջիլպլաստ Փրիվատ լիմիթեդ , Հնդկաստան	Պերիֆերիկ կատետեր G-22, ատրավմատիկ ծայրով, հիգենիկ ներարկման պորտով տեղադրված է թևիկների վրա	հատ	44.89	13467	300			
49	33141641	Կերակրման զոնդ 18Frկլործայրով	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենք, Չինաստան	Կերակրման զոնդ՝ զոնդ սնուցող 18 Fr կլոր ծայրով	հատ	59	8850	150			

50	33141641	Կերակրման զոնդ 16Frկլործայրով	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենք, Չինաստան	Կերակրման զոնդ՝ զոնդ սնուցող 16 Fr կլոր ծայրով	հատ	59	5900	100			
52	33141000	Բախիլ զույգ №100	Ֆարմել, Ռուսաստան	Բախիլ	հատ	3.9	19500	5000			
56.	33141159	Ձեռնացներ զնման ոչ ստերիլ: Լատեքս L չափսի	Թոփ Գլով ՍԴՆ ԲՀԴ, Մալազիա	Ձեռնացներ զնման ոչ ստերիլ: Լատեքս L չափսի	զույգ	27.96	279600	10000			
57.	33141159	Ձեռնացներ բժշկական՝ ոչ ստերիլ: Լատեքս M չափսի	Թոփ Գլով ՍԴՆ ԲՀԴ, Մալազիա	Ձեռնացներ բժշկական՝ ոչ ստերիլ: Լատեքս M չափսի	զույգ	27.96	279600	10000			
63	33141142	Ներարկիչ ասեղով 2.0	Եվրոմեդ, Չանգժոու Յուանդոնգ մեդիքալս Էքսիփմենթ, Չինաստան	Ներարկիչ 2.0 եռակոմպոնենտ, ասեղ 23G:Պատրաստված թափանցիկ, ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից	հատ	10.99	65940	6000			
64	33141142	Ներարկիչ ասեղով 5.0	Եվրոմեդ, Չանգժոու Յուանդոնգ մեդիքալս Էքսիփմենթ, Չինաստան	Ներարկիչ 5.0 եռակոմպոնենտ, ասեղ 22G:Պատրաստված թափանցիկ, ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից	հատ	10.99	76930	7000			
65	33141142	Ներարկիչ ասեղով 10.0	Եվրոմեդ, Չանգժոու Յուանդոնգ մեդիքալս Էքսիփմենթ, Չինաստան	Ներարկիչ 10.0 եռակոմպոնենտ, ասեղ 21G:Պատրաստված թափանցիկ, ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից	հատ	16.9	84500	5000			
66	33141142	Ներարկիչ ասեղով 20.0	Եվրոմեդ, Չանգժոու Յուանդոնգ մեդիքալս Էքսիփմենթ, Չինաստան	Ներարկիչ 20.0 եռակոմպոնենտ, ասեղ 21G:Պատրաստված թափանցիկ, ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից	հատ	25.9	77700	3000			
72	33141136	Կատետեր ասպիրացիոն CH 8 № 1	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենք, Չինաստան	Ասպիրացիոն կաթետր № 8, մանրէազերծ	հատ	49	1470	30			
73	33161220	Շպատել փայտե № 100 մեծերի	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենք, Չինաստան	Շպատել փայտե՝ երկարությունը 150 մմ, լայնությունը 18 մմ, ոչ	հատ	4.77	9540	2000			

				ստերիլ, տուփում 100 հատ				
74	33141000	Պորտասեղմիչ բժշկական № 1	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենք, Չինաստան	Պորտասեղմիչ բժշկական	հատ	26	2600	100
75	33692000	Պերհիդրոլի հիդրոքլորիդ 33% 30.0	Էսկո-Ֆարմ ՍՊԸ, Հայաստան	Ջրածնի պերօքսիդի լ-թ 33% 30.0մլ, 22հկ կոտրվող	ֆլակոն	108.69	54345	500
78	33191580	Ջերմաչափ № 1	Եվրոմեդ, Հայաստան	Ջերմաչափ-մարմնի ջերմաստիճանը չափելու համար, սնդիկային, չափման դիապազոնը 32-42 °C, չափը M- 125 մմ	հատ	251	5020	20
80	33141160	Սոնոգել 250մլ	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենք, Չինաստան	Սոնոգել 250մլ, հատ	հատ	248	37200	150
82	33141112	Սպեղանի կտորից 2.5սմ*5մ պլաստիկ կոճով	Սպեղանի, Ալ Պլաստ, Հայաստան	Սպեղանի կտորից 2.5սմ*5մ պլաստիկ կոճով	հատ	123.9	12390	100
83	33141112	Սպեղանի կտորից 5սմ*5մ պլաստիկ կոճով	Այ Պլաստ, Հայաստան	Բամբակյա վիրաբուժական ժապավեն 5սմx5մ պլաստիկ կոճով, կպչուն	հատ	225.75	45150	200
84	33141111	Սպեղանի ԱյՊլաստ 1,8*7,0 սմ № 10	Այ Պլաստ, Հայաստան	Բամբակյա կպչուն սպեղանի 1,8 սմx7.0 սմ	հատ	2.94	8820	3000
87	33661200	Սպորտային սառեցնող ցավազրկող ցողաշիթ 150 մլ(22245)	Արսանա ՊԻԿ, Իտալիա	Սպորտային սառեցնող ցավազրկող ցողաշիթ 150 մլ(22245)	հատ	1432	7160	5
90	33141212	Վազելին բժշկական 30գ	Էդա Տեխ, Հայաստան	Վազելին բժշկական սպիտակ 30գ	հատ	111	3330	30
106	33123100	Ճնշաչափ աներոիդ ստետոսկոպով	Չինաստան	Ճնշաչափ աներոիդ ստետոսկոպով –ՁՃ չափման սարք,	հատ	3224.12	64482.4	20

				ցուցիչով, մանժետով, ստետոսկոպով							
108	33191530	Փոխներարկման համակարգ ֆիլտրով ITO1 № 1	Էնջիպլաստ Փրիվատ Լիմիթեդ, Հնդկաստան	Փոխներարկման համակարգ ֆիլտրով՝	հատ	79	2370	30			
109	33631310	**Դիկլոֆենակ ամպ. 25մգ/մլ 3 մլ № 5**	**Լեկխիմ-Խարկով ԲԸ, 36, , ՈՒկրաինա**	**Դիկլոֆենակ 75մլ/3մլ 3 մլ**	**սրվակ**	84	168000	2000			

***Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել:**

***Ծանոթություն**

*Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:

ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,

գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

դ.Գնման առարկայի պահպանումը և տեղափոխումն իրականացվում է համաձայն վերջիններիս արտաքին փաթեթի կամ ներդիր-թերթիկի ցուցումների:

***Ծանոթություն** – Եթե գնման առարկաների հատկանիշները պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրում կարդալ «կամ համարժեք» բառը: Համաձայն (Օրենքի Հոդված 13, Կետ 5)

• Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա :

******Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Քաջարան, Բակունցի 1 «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ , աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին՝ 09:00-17:00:***

*******Ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Գնորդից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:***

********Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:***

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ	«Նատալի ֆարմ»ՍՊԸ
Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1	Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ	Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ
Հ/Հ 1570025402170100	Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 09417527	ՀՎՀՀ 01222567
Տնօրենի պաշտոնակատար Հ.Թադևոսյան	տնօրեն՝ Ա.Ասատրյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
« » 2018թ. կնքված
«ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2.	33141320	Ասեղ 21G, չժանգոտվող մետաղից: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
3.	33141328	ասեղ ողնուղեղային 22G անեստեզիայի համար			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
7.	33141000	Անձեռոցիկ թանզիֆ ստերիլ 16*14			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
8.	33141130	Ման բժշկ. Անալիզիհամար 120մլ ոչ ստերիլ			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
10.	33141117	Բժշկական բամբակ 50.0			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
15.	33141110	Բինտ 7x14/ստերիլ/			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
16.	33141110	Բինտ գիպսե 3*20			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
18.	33141129	Դիմակ մեկանգամյա օգտագործման			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
19.	31651200	ԷՍԳ- ժապավեն 63*30կլոր № 10			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
24.	33141000	Էնդոտրախեալ խողովակ N6.0			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
25.	33141000	Էնդոտրախեալ խողովակ N6.5			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
26.	33141000	Էնդոտրախեալ խողովակ N7.5			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%

27.	33141000	Էնդոտրախեալ խողովակ N7			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
28.	33141000	Էնդոտրախեալ խողովակ N8			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
33.	33141310	Ժանե ներարկի չլայն երկար ծայրով 60.0			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
38.	33141136	կաթետր Ֆոլի երկճյուղ 16Fr			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
39.	33141136	կաթետր Ֆոլի երկճյուղ 18Fr			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
40.	33141136	կաթետր Ֆոլի երկճյուղ 14Fr			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
41.	33141136	Կատետր ն/ե 18 Fr			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
42.	33141136	Կատետր ն/ե G20			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
43.	33141136	Կատետր ն/ե G22			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
49.	33141641	Կերակրման զոնդ 18Frկլործայրով			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
50.	33141641	Կերակրման զոնդ 16Frկլործայրով			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
52.	33141000	Բախիլ			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
56.	33141159	Ձեռնացներ բժշկական՝ ոչ ստերիլ: Լատեքս L չափսի			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
57.	33141159	Ձեռնացներ բժշկական՝ ոչ ստերիլ: Լատեքս M չափսի			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
63.	33141142	Ներարկիչ 2.0 ասեղով			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
64.	33141142	Ներարկիչ 5.0 ասեղով			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
65.	33141142	Ներարկիչ 10.0 ասեղով			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
66.	33141142	Ներարկիչ 20.0 ասեղով			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
72.	33141136	Շնչուղիների արտածծման կատետր Fr 8			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
73.	33161220	Շպատել փայտե			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
74.	33141000	Պորտասեղմիչ բժշկական			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%

75.	33692000	Պերհիդրոլի հիդրոքլորիդ 33% 30.0			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
78.	33191580	Ջերմաչափ			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
80.	33141160	Սոնոզել 250մլ			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
82.	33141112	Սպեղանի 2.5*5			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
83.	33141112	Սպեղանի 5*5			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
84.	33141111	Սպեղանի Santavik			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
87.	33661200	Սպորտային սառեցնող ցավազրկող ցողացող գել			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
90.	33141212	Վազելին բժշկական 30գ			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
106.	33123100	Տոնոմետր			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
108.	33191530	Փոխներարկման համակարգ ֆիլտրով			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%
109.	33631310	**Դիկլոֆենակ 75մլ/3մլ 3 մլ**			20 %	30%	40 %	50%	60 %	70 %	80%	90%	100%	100%

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ
«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1
Բանկ՝«Ամերիաբանկ»ԲԲԸ
Հ/Հ 1570025402170100
ՀՎՀՀ 09417527
Տնօրենի պաշտոնակատար Հ.Թադևոսյան

/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ
«Նատալի ֆարմ»ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
տնօրեն՝ Ա.Ասատրյան

/ստորագրություն/

01222567
«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ»
"НАТАЛИ ФАРМ"
"NATALI FARM"